3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

**Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք**

**ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «ԱՌԴԱ» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող ծրագրերի շրջանակներում բեռի ներմուծման մասին (N 1)» որոշման նախագծի կապակցությամբ առաջարկությունների և դիտողությունների վերաբերյալ**

| Դիտողության կամ առաջարկության բովանդակությունը | Հիմնավորում |
| --- | --- |
| **ՀՀ ֆինանսների նախարարության դիտողությունների ու առաջարկությունների վերաբերյալ** | |
| ընդհանուր առմամբ առարկություններ չունենք, սակայն առաջարկում ենք ներկայացված որոշման նախագծում նշել նաև ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 19.03.2010թ. N Մ-177-Ա որոշմամբ հաստատված ծրագրում փոփոխություններ կատարելու վերաբերյալ 31.10.2011թ. N Մ-915-Ա որոշման մասին: | Հաշվի է առնվել, ներկայացված որոշման նախագիծը լրամշակվել է: |

Մ 3/2.4

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ

**ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ**

**ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ** Ն 3/2.5

0015, Երևան, Մ.Խորենացու 3, 7
Հեռ. 060 544303

№ ԿՄ/3-4/2855-14
14.03.2014թ.

ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի նախագահ
պարոն Ս. Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ձեր 07.03.2014թ. թիվ 15/15.6/3157-14 գրությանը կից ներկայացված Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միության հասցեով ստացված բեռի ներմուծման ծրագրի մասին (N 1)» որոշման նախագծի վերաբերյալ առաջարկություններ չկան:

Հարգանքով՝

Վ.Միրումյան

*Բեքացակարգերիբաժին 060 544645*

044/6867-14
14.03.2014թ.

**ՆԱԽԱԳԻԾ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

___ մարտի 2014 թվականի N Մ - -Ա Ն 3/2.6
քաղ. Երևան

## «ՀԱՅԱՍՏԱՆԻ ԾԱՆՐԱՄԱՐՏԻ ՖԵԴԵՐԱՑԻԱ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2013 թվականի մարտի -ի N 3/3.8-2/-13, Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության 2013 թվականի մարտի -ի N 1/06/-13 ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2013 թվականի մարտի -ի N ՎՄ/3-4/-13 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել Ծանրամարտի միջազգային ֆեդերացիայի կողմից որպես օժանդակություն «Հայաստանի ծանրամարտի ֆեդերացիա» հասարակական կազմակերպության հասցեով ուղարկված 10 լրակազմ ծանրաձողերի (90 տեղ, 1,980 կգ ընդհանուր քաշով, 500 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 625,000 դրամ, «Արարատյան» ՄՏ) ներմուծման ծրագիրը:

2. «Հայաստանի ծանրամարտի ֆեդերացիա» հասարակական կազմակերպությանը՝ նշված բեռի համապատասխան ձևակերպումներն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

Ն Ա Խ Ա Գ Ի Ծ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**---- ------------ 2014 թվականի N Մ- -Ա** Ա 3/2.7
**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 9-Ի N Մ-774-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ**
(Ամերիկայի հայ ավետարանչական ընկերակցության Հայաստանի մասնաճյուղ)

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի -ի N 3/3.8-2/ -14, և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2014 թվականի -ի N ՎՄ/3-4/ -14 եզրակացությունները, **ո ր ո շ ու մ  է.**

1. Սահմանել, որ Ամերիկայի հայ ավետարանչական ընկերակցության կողմից ձեռք բերված՝ բեռը (գիպսե-ստվարաթղթե սալիկներ՝ 16 տեղ, 20,960.0 կգ ընդհանուր քաշով, 6,156 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժեքով, որից 3,900 ԱՄՆ դոլար փոխադրման ծախսերը, «Արարատյան» ՏՄ) ներմուծվում է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011 թվականի սեպտեմբերի 9-ի «Ամերիկայի հայ ավետարանչական ընկերակցության կողմից իրականացվող «Ավետիսյան դպրոցի կառուցում» ծրագրի մասին» N Մ-774-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

---

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**
**Ն Ա Խ Ա Ր Ա Ր Ի  Տ Ե Ղ Ա Կ Ա Լ - Գ Լ Խ Ա Վ Ո Ր  Գ Ա Ն Ձ Ա Պ Ե Տ**

Ա 3/2.7

0010, Երևան, Մելիք-Ադամյան փող. 1
Հեռ. (+374 60) 700 226

11.03.14թ. № 3/3.8-2/3163-14

Ձեր № ____________

ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի նախագահ՝ պարոն Սիմոն Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ի պատասխան Ձեր 26.02.2014թ. N 15/15.2/2705-14 գրության՝ կապված ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011 թվականի սեպտեմբերի 9-ի N Մ-774-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում բեռների ներմուծման մասին (Ամերիկայի հայ ավետարանչական ընկերակցության Հայաստանի մասնաճյուղ)» որոշման նախագծի հետ, հայտնում ենք, որ մեր իրավասությունների շրջանակներում դիտողություններ և առաջարկություններ չունենք:

Հարգանքով՝

Ատոմ Ջանջուղազյան

Կատարող՝ Ս. Այվազյան
Հեռ. 060 700 227

034/6513-14

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**

**ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ-ԳԼԽԱՎՈՐ ԳԱՆՁԱՊԵՏ**

ԱՐ 3/2.8

0010, Երևան, Մելիք-Ադամյան փող. 1
Հեռ. (+374 60) 700 226

11.03.14թ. № 3/3.8.2/3162-13

Ձեր №

ՀՀ կառավարության բարեգործական
ծրագրերի համակարգման հանձնաժողովի
նախագահ՝ պարոն Սիմոն Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ի պատասխան Ձեր 26.02.2014թ. N 15/15.2/2699-14 գրության՝ կապված ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011 թվականի սեպտեմբերի 9-ի N Մ-774-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում բեռների ներմուծման մասին (Ամերիկայի հայ ավետարանչական ընկերակցության Հայաստանի մասնաճյուղ)» որոշման նախագծի հետ, հայտնում ենք, որ մեր իրավասությունների շրջանակներում դիտողություններ և առաջարկություններ չունենք:

Հարգանքով՝

Ատոմ Ջանջուղազյան

Կատարող՝ Ս. Այվազյան
Հեռ. 060 700 227

034/6512-14

---

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ**

**ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ**

**ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ**

ԱՐ 3/2.8

0015, Երևան, Մ.Խորենացու 3, 7
Հեռ. 060 544303

28.02.14
ԶԱ/3-4/2248

ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի նախագահ
պարոն Ս. Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ձեր 26.02.2014թ. թիվ 15/15.2/2699-14 գրությանը կից ներկայացված Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011 թվականի սեպտեմբերի 9-ի N Մ-774-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում բեռների ներմուծման մասին (Ամերիկայի հայ ավետարանչական ընկերակցության Հայաստանի մասնաճյուղ)որոշման նախագծի վերաբերյալ առաջարկություններ չկան:

Հարգանքով՝

Վ. Միրումյան

Ընթացակարգերի բաժին, հեռ.
060 544645

044/5419-14

*ՆԱԽԱԳԻԾ*

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**____ փետրվարի 2013 թվականի N Մ- -Ա** Ա·3/3.2

**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 20-Ի N Մ-1277-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՈՒ ԿԻՑ ԾՐԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՆՈՒՅՆ ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

(Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի փետրվարի-ի N 3/3.8-1/, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2014 թվականի փետրվարի -ի N 02/ և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2014 թվականի փետրվարի -ի N ՎՄ/3-4/, եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի դեկտեմբերի 20-ի Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի կողմից իրականացվող «Էօրնեկեան վարժարանի կառուցում» ծրագրի մասին» N Մ-1277-Ա որոշման 1-ին և կից ծրագրի 6-րդ կետում բյուջեն դարձնել 2,612,295,380 դրամ (ծրագրի լրամշակված տարբերակը կցված է):

2. Սահմանել, որ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի կողմից (ՀՎՀՀ՝ 04703401) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

1) «Հայռուսգազարդ» ՓԲԸ-ի Էջմիածնի ԳԳՄ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00046317) 2013 թվականի սեպտեմբերի 1-ին կնքված N 08308137159 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է բնական գազի ծառայությունների մատուցում՝ 185,000,000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի;

2) «Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ-ի «Կենտրոն-Արևմտյան» մասնաճյուղի էջմիածնի տեղամասի հետ (ՀՎՀՀ՝ 02509667) 2008 թվականի հունվարի 1-ին կնքված N 150995043 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է խմելու ջրի մատակարարում՝ 65,000,000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի;

3) «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի «Մուսալեռ» մասնաճյուղի հետ (ՀՎՀՀ՝ 01520882) 2013 թվականի սեպտեմբերի 10-ին կնքված N ԿՊ0054 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է էլեկտրաէներգիայի մատակարարում՝ 150,000,000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի;

4) «Արմենտել» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02500052) 2008 թվականի փետրվարի 1-ին կնքված N 310042539 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է հեռախոսակապի ծառայությունների մատակարարում՝ 40,000,000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

3. Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին՝ Ա·3/3.2

1) սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման շրջանակներում մատակարար (կապալառու) կազմակերպությունների հետ կնքվելիք պայմանագրերի պատճենները ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով՝ «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթների համաձայն ավելացված արժեքի հարկից ազատվող ապրանքների ու ծառայությունների շրջանակը որոշելու համար.

2) մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել տեղեկատվություն տվյալ եռամսյակի ընթացքում նշված ծրագրի շրջանակներում կազմակերպության կողմից, ինչպես նաև կազմակերպությանը մատակարարված ապրանքների ու մատուցված ծառայությունների, իսկ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե, Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն:

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
## ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ-ԳԼԽԱՎՈՐ ԳԱՆՁԱՊԵՏ

ԱՐ. 3/3.2

0010, Երևան, Մելիք-Ադամյան փող. 1
Հեռ. (+374 60) 700 226

3.IV.2014թ. № 3/3.8-2/3582-14

Ձեր № ____________

ՀՀ կառավարության բարեգործական
ծրագրերի համակարգման հանձնաժողովի
նախագահ՝ պարոն Սիմոն Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ի պատասխան Ձեր 06.03.14թ. 15/15.8/3087-14 և ի լրումն ՀՀ ֆինանսների նախարարության 04.03.2014թ. N 3/3.8-2/3177-14 գրությունների կապված՝ «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի դեկտեմբերի 20-ի N Մ-1277-Ա որոշման մեջ և կից ծրագրում փոփոխություն կատարելու և նույն ծրագրին հարակից գործարքների մասին (Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին)» որոշման նախագծի հետ, հայտնում ենք, որ անհրաժեշտ է որոշման նախագծի 2.1 կետում նշված 2008 թվականի հունվարի 3-ին կնքված N 10002082749 պայմանագրի տվյալները փոխարինել 2013 թվականի սեպտեմբերի 1-ին կնքված N 08308137159 պայմանագրի տվյալներով:

Հարգանքով՝

Ատոմ Ջանջուղազյան

Կատարող՝ Ն. Կարապետյան
Հեռ. 060 700 227

034/6453-14

---

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
## ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ

ԱՐ. 3/3.2

0078 Երևան, Հալաբյան 41ա, հեռ. 380385
Էլ. փոստ՝ grigor.mouradian@justice.am

N: 02/1244-14
28.02.2014թ

**Հայաստանի Հանրապետության կառավարության
բարեգործական ծրագրերի համակարգման
հանձնաժողովի նախագահ
պարոն Ս. Տեր-Սիմոնյանին**

**Ի կատարումն ՀՀ կառավարության 2014թ. փետրվարի 25-ի
15/15.8/2616-14 թվակիր հանձնարարականի**

**Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան**

Հայտնում ենք, որ Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «2013 թվականի դեկտեմբերի 20-ի թիվ Մ-1277-Ա որոշման մեջ ու կից ծրագրում փոփոխություն կատարելու և նույն որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքների մասին» ծրագրի դրույթներն անհրաժեշտ է խմբագրել, մասնավորապես՝ ծրագրի 9-րդ կետում անհրաժեշտ է նշել նախատեսվող միջոցառումների ժամկետները՝ նկատի ունենալով ՀՀ կառավարության 2003 թվականի հունվարի 16-ի «Բարեգործական ծրագրերի մասին» թիվ 66-Ն որոշման պահանջները:

**Հարգանքով՝** **Գ. Մուրադյան**

Կատարող՝ Իրավական ակտերի փորձաքննության գործակալություն
Ա. Ստեփանյան, հեռ՝. 380-227

035/5413-14

**_ՆԱԽԱԳԻԾ_**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

### Ո Ր Ո Շ ՈՒ Մ

___ մարտի 2014 թվականի N Մ - Ա· 3/3.3 -Ա

քաղ. Երևան

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 3-Ի N Մ-078-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՆՈՒՅՆ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ Մ Ա Ս Ի Ն

(Գիտության և առաջատար տեխնոլոգիաների ազգային հիմնադրամ)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի մարտի -ի N 3/3.8-1/-14 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2014 թվականի մարտի -ի N ՎՄ/3-4/-14 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ  է.***

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2012 թվականի փետրվարի 3-ի «Աջակցություն Ա. Ի. Ալիխանյանի անվան Ազգային գիտական լաբորատորիա» հիմնադրամի տիեզերական ճառագայթների բաժանմունքի գործունեությանը» ծրագրի մասին» N Մ-078-Ա որոշմամբ հաստատված (2013 թվականի դեկտեմբերի 6-ի N Մ-1139-Ա որոշման խմբագրությամբ) ծրագրի 6-րդ կետի երկրորդ պարբերության չորրորդ ենթակետը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետևյալ բովանդակությամբ՝

«- հրատարակչական ծախսեր և բաժանորդագրություններ – 3600000 (երեք միլիոն վեց հարյուր հազար) դրամ, այդ թվում՝ 763000 (յոթ հարյուր վաթսուներեք հազար) դրամ – 2012թ. փետրվարի 1-ից մինչև 2012թ. դեկտեմբերի 31-ը, 600000 (վեց հարյուր հազար) դրամ – 2013թ. ընթացքում, և 2237000 (երկու միլիոն երկու հարյուր երեսունյոթ հազար) դրամ – 2014թ. ընթացքում.»:

2. Սահմանել, որ Գիտության և առաջատար տեխնոլոգիաների ազգային հիմնադրամի կողմից (քաղ. Երևան, Ազատության 26, ՀՎՀՀ՝ 00040233) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Տիգրան Մեծ» հրատարակչություն» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02505322) 2014 թվականի փետրվարի 26-ին կնքված՝ N 02-02 NFSAT եռակողմ պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է հրատարակչական նյութերի տպագրության աշխատանքների իրականացում՝ 2,000,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

---

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

### Ն Ա Խ Ա Ր Ա Ր Ի Տ Ե Ղ Ա Կ Ա Լ - Գ Լ Խ Ա Վ Ո Ր Գ Ա Ն Ձ Ա Պ Ե Տ

Ա· 3/3.3

0010, Երևան, Մելիք-Ադամյան փող. 1
Հեռ. (+374 60) 700 226

10.03.2014թ. № 3/3.8-2/3470-14

Ձեր № ____________

ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի նախագահ՝ պարոն Սիմոն Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ի պատասխան Ձեր 04.03.14թ. N 15/15.6/2985-14 գրության՝ կապված ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2012 թվականի փետրվարի 3-ի N Մ-078-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքի մասին (Գիտության և առաջատար տեխնոլոգիաների ազգային հիմնադրամ)» որոշման նախագծի հետ, հայտնում ենք, որ ընդհանուր առմամբ առարկություններ չունենք, սակայն նշված որոշմամբ հաստատված ծրագրի 6-րդ կետով 2014թ.-ին հրատարակչական ծախսերի և բաժանորդագրության համար նախատեսված է 1,200,000 դրամ, իսկ ըստ ներկայացված որոշման նախագծի՝ հրատարակչական նյութերի տպագրության աշխատանքների իրականացման համար ներկայացված է 2,000,000 դրամի գործարք: Ուստի առաջարկում ենք ծրագրում կատարել համապատասխան փոփոխություն:

Հարգանքով՝

Ատոմ Ջանջուղազյան

Կատարող՝ Ն. Կարապետյան
Հեռ. 060 700 227

034/6273-14
10.03.2014թ.

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ** մ. 3/3.4

**մարտի 2014 թվականի N Մ- - Ա**
**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 28-Ի N Մ-132-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ**
**(Բաց հասարակության ինստիտուտի օժանդակության հիմնադրամի հայկական մասնաճյուղ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի մարտի -ի N և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2014 թվականի մարտի -ի N եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ  է.***

1. Սահմանել, որ Բաց հասարակության ինստիտուտի օժանդակության հիմնադրամի հայկական մասնաճյուղի (ՀՎՀՀ՝ 02535097) կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի փետրվարի 28-ի «Բաց հասարակության ինստիտուտի օժանդակության հիմնադրամի հայկական մասնաճյուղի (ԲՀԻՕՀՀՄ) կողմից 2013-2014 թվականներին իրականացվող ծրագրի մասին» N Մ-132-Ա որոշմամբ (2013 թվականի հուլիսի 19-ի N Մ-644-Ա որոշման խմբագրությամբ) հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

1) «ԱրմենՏել» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02500052) 2014 թվականի փետրվարի 5-ին կնքված՝ N 112756936 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2014 թվականի ապրիլի 1-ից մինչև 2014 թվականի դեկտեմբերի 31-ը ընկած ժամանակահատվածում հեռախոսակապի ծառայությունների մատուցում՝ 820,000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի.

2) «Օրանժ Արմենիա» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00098599) 2014 թվականի մարտի 5-ին կնքված՝ N 1610132 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2014 թվականի ապրիլի 1-ից մինչև 2014 թվականի դեկտեմբերի 31-ը ընկած ժամանակահատվածում շարժական հեռախոսակապի ծառայությունների մատուցում՝ 615,000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
Ն Ա Խ Ա Ր Ա Ր Ի  Տ Ե Ղ Ա Կ Ա Լ - Գ Լ Խ Ա Վ Ո Ր  Գ Ա Ն Ձ Ա Պ Ե Տ

0010, Երևան, Մելիք-Ադամյան փող. 1
Հեռ. (+374 60) 700 226

12.03.2014թ. №3/3.8-2/3671-14

Ձեր № ______________

ՀՀ կառավարության բարեգործական
ծրագրերի համակարգման հանձնաժողովի
նախագահ՝ պարոն Սիմոն Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ի պատասխան Ձեր 06.03.14թ. N 15/15.11/3115-14 գրության՝ կապված ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի փետրվարի 28-ի N Մ-132-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքների մասին (Բաց հասարակության ինստիտուտի օժանդակության հիմնադրամի հայկական մասնաճյուղ)» որոշման նախագծի հետ, հայտնում ենք, որ մեր իրավասությունների շրջանակներում դիտողություններ և առաջարկություններ չունենք:

Հարգանքով՝

Ատոմ Ջանջուղազյան

Կատարող՝ Ն. Կարապետյան
Հեռ. 060 700 227

034/6588-14
12.03.2014թ.

ԳԻՏՈՒԹՅԱՆ և ԱՌԱՋԱՏԱՐ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ

NATIONAL FOUNDATION OF SCIENCE AND ADVANCED TECHNOLOGIES

0014, Երևան, Ազատության պող., 26, Հեռ.: 28-81-92, 28-84-68 ⊗ 26, Azatutyan Ave., 0014, Yerevan, Armenia,
Phones: (374-10) 28-81-92, 28-84-68 Fax: (374-10) 28-13-80; E-mail: info@nfsat.am; Internet: www.nfsat.am

N 14/14 "11" 03 2014

Ա.3/3.3

ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի նախագահ պարոն Ս.Տեր–Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր–Սիմոնյան,

Ի պատասխան ՀՀ Ֆինանսների նախարարի տեղակալի՝ պրն. Ա.Ջանջուղազյանի առ 10.03.2014թ N 3/3.8-2/3470-14 նամակի, ուզում ենք նշել, որ իրոք, ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2012թ. փետրվարի 3–ի h.Մ–078-Ա որոշումով հաստատված ծրագրի 6–րդ կետով հրատարակչական ծախսերի և բաժանորդագրության համար 2014թ նախատեսված է 1.200.000 դրամ: Միևնույն ժամանակ ուզում ենք նշել, որ այդ հոդվածով ընդհանուր հաստատված գումարը կազմում է 3.600.000 դրամ:

Փաստացի 2012թ այդ հոդվածով ծախսվել է 763.000 դրամ, 2013թ.՝ 600.000 դրամ, իսկ 2014թ մնացորդը կազմում է 2.237.000 դրամ:

Խնդրում ենք կատարել համապատասխան փոփոխություն ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2012թ. փետրվարի 3–ի h.Մ–078-Ա որոշումով հաստատված ծրագրում, և ծրագրի 6–րդ կետը շարադրել հետևյալ կերպ.

– հրատարակչական ծախսեր և բաժանորդագրություններ – **3600000** (երեք միլիոն վեց հարյուր հազար) դրամ, այդ թվում **763000** (յոթ հարյուր վաթսուներեք հազար) դրամ – 2012 թ. փետրվարի 1–ից մինչև 2012թ դեկտեմբերի 31–ը, **600000** (վեց հարյուր հազար) դրամ – 2013թ ընթացքում, և **2237000** (երկու միլիոն երկու հարյուր երեսունյոթ հազար) դրամ – 2014թ ընթացքում.

Հարգանքներով,

Նախագահ՝ Հ.Կարապետյան

433

11 094-6520
03 14

***Ն Ա Խ Ա Գ Ի Ծ***

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**___ մարտի 2014 թվականի N Մ - -Ա**
**քաղ. Երևան**

Ա.3/4.1

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐ-ՎԱՐԻ 18-Ի N Մ-045-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԵՎ ՆՈՒՅՆ ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏ-ՎԱԾ ԾՐԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**(«ԱՌԴԱ» բարեգործական հիմնադրամ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի մարտի 5-ի N 3/3.8-2/3304-14 եզրակացությունը, ինչպես նաև «ԱՌԴԱ» բարեգործական հիմնադրամի 2014 թվականի մարտի 10-ի N Կ-10/03 գրությունը,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011 թվականի փետրվարի 18-ի «ԱՌԴԱ» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Գյումրի - 10» ծրագրի մասին» N Մ-045-Ա որոշման մեջ և կից ծրագրում կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) որոշման 1-ին կետում «12.5 մլն դրամ» բառերը փոխարինել «24.5 մլն դրամ» բառերով.

2) որոշմանը կից ծրագիրը շարադրել նոր խմբագրությամբ (կցվում է):

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետին և Գյումրու քաղաքապետին:

ակումբ» ՀԿ, «Սահակ-Մեսրոպ» ԲՀԿ, Վանածորի Չուխաջյանի անվան արվեստի դպրոց) շահառուները ներառված չեն ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 07.03.2012թ. N Մ-170-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շահառուների ցուցակում, ուստի անհրաժեշտ է նշված ծրագրում ևս կատարել համապատասխան փոփոխություններ:

Ա.3/4.1

Հարգանքով՝

Ատոմ Ջանջուղազյան

Կատարող՝ Ս. Այվազյան
Հեռ. 060 700 227

034/6010-14
05.03.2014թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

18 փետրվարի 2011 թվականի N Մ-045-Ա
քաղ. Երևան

## «ԱՌԴԱ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ԳՅՈՒՄՐԻ - 10» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2011 թվականի փետրվարի 7-ի N 3/3.8-2/925-11, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2011 թվականի փետրվարի 7-ի N 01/567, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2011 թվականի փետրվարի 8-ի N ԱԱ/3-4/587-11 և Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի 2011 թվականի փետրվարի 4-ի N 01/417-11 եզրակացությունները,* ***որոշում է.***

1. Բարեգործական որակել «ԱՌԴԱ» բարեգործական հիմնադրամի կողմից (ՀՀ, քաղ. Երևան, Պարույր Սևակի 9, ՀՎՀՀ՝ 00057312) իրականացվող՝ 12.5 մլն դրամ ընդհանուր արժողությամբ «Գյումրի - 10» ծրագիրը (կցվում է):

2. «ԱՌԴԱ» բարեգործական հիմնադրամին՝

1) սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման շրջանակներում մատակարար (կապալառու) կազմակերպությունների հետ կնքվելիք պայմանագրերի պատճենները ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով՝ «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթների համաձայն ավելացված արժեքի հարկից ազատվող ապրանքների ու ծառայությունների շրջանակը որոշելու համար.

2) մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել տեղեկություններ՝ տվյալ եռամսյակի ընթացքում՝ նշված ծրագրի շրջանակներում կազմակերպության կողմից, ինչպես նաև կազմակերպությանը մատակարարված ապրանքների ու մատուցված ծառայությունների, իսկ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետին և Գյումրու քաղաքապետին:

ՆԱԽԱԳԱՀ Մ. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՆԱԽԱԳԻԾ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

## Ո Ր Ո Շ Ու Մ

___ մարտի 2014 թվականի N Մ - -Ա Մ 3/կ.2

քաղ. Երևան

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 21-Ի N Մ-1032-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ Մ Ա Ս Ի Ն

**(«Հրայր և Աննա Հովնանյան ֆաունդեյշն» կորպորացիայի մասնաճյուղ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի մարտի -ի N 3/3.8-1/-14 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2014 թվականի մարտի -ի N ՎՄ/3-4/-14 եզրակացությունները, ինչպես նաև հաշվի առնելով «Հրայր և Աննա Հովնանյան ֆաունդեյշն» կորպորացիայի մասնաճյուղի 2014 թվականի մարտի 4-ի գրությունը,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2012 թվականի դեկտեմբերի 21-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2010 թվականի մարտի 19-ի N Մ-176-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքների մասին» N Մ-1032-Ա որոշման 1-ին կետի 2-րդ ենթակետում (2013 թվականի հունիսի 7-ի N Մ-399-Ա որոշման խմբագրությամբ) «17,077,305 դրամի չափով» բառերը փոխարինել «21,749,135 դրամի չափով» բառերով:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

---


ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Ն Ա Խ Ա Ր Ա Ր Ի Տ Ե Ղ Ա Կ Ա Լ - Գ Լ Խ Ա Վ Ո Ր Գ Ա Ն Ձ Ա Պ Ե Տ

Մ 3/կ.2

0010, Երևան, Մելիք-Ադամյան փող. 1

Հեռ. (+374 60) 700 226


10.03.2014թ. №3/3.8-2/3540-14

Ձեր № ____________

ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի նախագահ՝ պարոն Սիմոն Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ի պատասխան Ձեր 05.03.14թ. N 15/15.6/3017-14 գրության՝ կապված ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2012 թվականի դեկտեմբերի 21-ի N Մ-1032-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին («Հրայր և Աննա Հովնանյան ֆաունդեյշն» կորպորացիայի մասնաճյուղ)» որոշման նախագծի հետ, հայտնում ենք, որ որոշման նախագծի 1-ին կետում նշված փոփոխության մեջ հաշվի չի առնվել 07.06.13թ. ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի N Մ-399-Ա որոշումը, որով արդեն իսկ «3.656.900 դրամ» թիվը փոխարինվել է «17.077.305 դրամ» թվով: Ուստի անհրաժեշտ է որոշման նախագծի 1-ին կետում նշված փոփոխության հիմք ընդունել վերը նշված փոփոխված թիվը:

Հարգանքով՝

Ատոմ Ջանջուղազյան

Կատարող՝ Ն. Կարապետյան
Հեռ. 060 700 227

034/6390-14
10.03.2014թ.

**ՆԱԽԱԳԻԾ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**___ մարտի 2014 թվականի N Մ - -Ա**
**քաղ. Երևան**

Ա 3/4.3

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 15-Ի N Մ-1049-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ
**(«Էյ Թի Փի» բարեգործական հիմնադրամ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի մարտի -ի N 3/3.8-1/-14 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2014 թվականի մարտի -ի N ՎՄ/3-4/-14 եզրակացությունները, ինչպես նաև հաշվի առնելով («Էյ Թի Փի» բարեգործական հիմնադրամի 2014 թվականի մարտի 4-ի N 117 գրությունը,* ***ո ր ո շ ու մ  է.***

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի նոյեմբերի 15-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի հոկտեմբերի 4-ի N Մ-867-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքների մասին» N Մ-1049-Ա որոշման 1-ին կետի 6-րդ ենթակետում «420,000 դրամի չափով» բառերից առաջ լրացնել «ամսեկան» բառը:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

---

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**
**Ն Ա Խ Ա Ր Ա Ր Ի Տ Ե Ղ Ա Կ Ա Լ - Գ Լ Խ Ա Վ Ո Ր Գ Ա Ն Ձ Ա Պ Ե Տ**

Ա 3/4.3

0010, Երևան, Մելիք-Ադամյան փող. 1
Հեռ. (+374 60) 700 226

11.03.2014թ. № 3/3.8-2/3584-1

Ձեր № ____________

ՀՀ կառավարության բարեգործական
ծրագրերի համակարգման հանձնաժողովի
նախագահ՝ պարոն Սիմոն Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ի պատասխան Ձեր 05.03.14թ. N 15/15.6/3025-14 գրության՝ կապված ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի նոյեմբերի 15-ի N Մ-1049-Ա որոշման մեջ լրացում կատարելու մասին («Էյ Թի Փի» բարեգործական հիմնադրամ)» որոշման նախագծի հետ, հայտնում ենք, որ մեր իրավասությունների շրջանակներում դիտողություններ և առաջարկություններ չունենք:

Հարգանքով՝

Ատոմ Ջանջուղազյան

034/6476-14
11.03.2014թ.

Կատարող՝ Ն. Կարապետյան
Հեռ. 060 700 227